

սին այսօր աշխարհի վրայ 130,000,000 մարդիկ, առանց հաշուելու Ամերիկայի ու Աֆրիկէի գաւառականները :

Պէտք է մանաւանդ ինքզինքնին տան երկրագործական գործառնութեանց ալ, որուն այնքան խրախուսիչ միջոցներ հայթայթած է վերջերս Օսմանեան բարեխնամ կառավարութիւնը : Երկրագործութիւն և վաճառականութիւն՝ երկու հինաւուրց եղբայր քոյրեր են իրարու, որ կը սնանին իրարմով . բայց աշխարհի վրայ ոչ մէկ գործ կայ երկրագործութեան հաւասար՝ բնական խաղաղական ազնուական և մարդու սկզբնական երանակեցութեան նպաստաւոր՝ բնութեան անհուն մեծվայելչութեանց և ճոխութեանց հետ ուղղակի անմիջնորդական յարաբերութեան մէջ դնելով անկեալ մարդուն հոգին ու մարմինը :

Առևտրական վաճառական ու նման գործերէ զըզուած յուսահատած մարդիկ՝ պէտք է քիչ մըն ալ տան իրենց խելքն ու միտքն երկրագործական օրհնեալ արուեստին, մանաւանդ մեր բազմաթիւ վանքերն ու վանականները⁽¹⁾, ձեռուընին կապկըպած դրամատէրները, աւելորդ բծիչկներն ու փաստաբանները, գրադէտները, վարժապետները, օրագրողներն ու ամէն անոնք՝ որոց ասպարէզը կարի՛ խճողեալ կարի՛ անպիտանացեալ է՝ հետամուտներու չափէն աւելի բազմութեան և ուրիշ կարևոր ու անյաղթելի պատճառներով : Առաջին քանի մը տարին՝ սկզբնական դժուարութեանց և ծախուց քիչ մը ատոյիկ համբերութեամբ տոկալով՝ պիտի գտնեն երկ-

(1) Երկրագործական և ուսումնական հաստատութեան մը համար յերուսաղէմ՝ երեք չորս տարի զրիչ, սիրտ, լեզու և պատի՛ւ անգամ ի զուր մաշեցուցինք յերուսաղէմ և ի Կ. Պոլիս՝ Երուսաղէմական խնդիրին անդորր կարգադրութեան ի նպաստ, բայց ի զո՛ւր. սատանն անդադար կը հանէր մեր զգ՛մ և՛ խժուծս և՛ խժուծս և՛ խժուծս : Վերջը չեկա՛ւ զեռ այս imbroglioին . . .